# Մայրենիի ֆլեշմոբ: Մարտ

4-5-րդ դասարաններ

Մուտք գործեք Google՝ ձեր կատարած աշխատանքը պահելու համար: Իմանալ ավելին

* Ցույց է տալիս, որ հարցին պատասխանելը պարտադիր է

Անուն, ազգանուն *

Շուշան Հակոբյան

Նշի՛ր դպրոցը: *

Արևմտյան

**1.Նշվածներից ո՞ր ծաղիկը որպես մարդու անուն չի օգտագործվում:**

- ○ Վարդ
- ◉ զանգակ
- ○ Մանուշակ
- ○ Հասմիկ

Ջնջել ընտրվածքը

**2. Տրված նախադասության մեջ թաքնվել են գույների երեք անվանումներ, փորձի՛ր գտնել դրանք՝ ուշադրություն դարձնելով տառերի հաջորդականությանը:**
*Կար մի բոպե, որ կարող էր թվալ, թե մենք կստանանք լուր թշնամու նահանջի մասին:*

Կարմիր, լուրթ, ալ

*3. Երեխաները Զատկի տոնին զվարճալի պայքար սկսեցին հավկիթներից ուժեղագույնը գտնելու համար:*

**Այս նախադասության մեջ կա մի բառ, որն ունի համանուն տարբերակ, և կա մի բառ, որի հոմանիշը ունի ամսվա անունով համանուն տարբերակ: Գտի՛ր և բացատրի՛ր համանուն տարբերակները:**

Զատիկ, մարտ

**4. Իսկ այժմ «այր» բառի համանուն տարբերակները փնտրի՛ր բառարանում և դրանցով կազմի՛ր նախադասություններ:**

Տղամարդ, քարանձավ,տղամարդը դրսում գո|

**5. Մ (մեն) տառը զբոսանքի էր դուրս եկել անտառ և կանգնեց մի քարանձավի դիմաց: Ի՞նչ բառ ստացվեց (նախորդ առաջադրանքը կօգնի քեզ գտնել այդ բառը):**

Մայր

**6. Իսկ ո՞ր բառի տնակում չի կարող բնակվել Մ տառը:**

- ○ Ա_բասիր
- ○ Ա_բարիշտ
- ○ Ա_բար
- ○ Ա_բոխ
- ◉ Ա_բաստանյալ

Ջնջել ընտրվածքը

**7. Նշված բառերի դիմաց ավելացրո՛ւ մեկական տառ այնպես, որ նոր բառ ստանաս:**

*Արև, ամպ, պիտակ, կար, այլ, այծ, պար, տապ, արկ, արի*

Բարև, լամպ, սպիտակ, տկար, քայլ, խայծ, նպար, շտապ, հարկ, Մարի

**8. Գուշակի՛ր հանելուկի պատասխանը:**

Մանուկն եկավ՝ պայծառ, անգին,
Կանաչ շորեր ունի հագին,
Թողեց հետքեր նա ամենուր,
Ծաղկով լցրեց դաշտն ու այգին:

Գարուն

**9. Մայրիկիդ անունով աքրոստիկոս հորինի՛ր և տեղադրի՛ր այստեղ:**

Ն-նամակում ես տեսա նամակագրություն:
Ա-ամպը եկավ նստեց սարին:
Ր-րոպեներն անցնում են:
Ի-ինքնաթիռը թռավ վերև:
Ն-նա գնաց խանութ:
Ե-ես ասեցի ցտեսություն:

**10. «Գիտե՞ք, որ գարուն է արդեն…» շարունակելով միտքը՝ հորինի՛ր պատմություն:**

Գարունը շատ հետաքրքիր և բազմերանգ գույներով է: Ես շատ եմ սահրում Գարունը:Երբ մի օր դուրս եմ գալիս տնից տեսնում եմ, որ Գարուն է: Ես ուրախանում եմ և գնում եմ մայրիկին պատմում եմ:

Առաջադրանքները կազմեց Անահիտ Հովսեփյանը: Շնորհակալություն:

Ձեր պատասխանը

Ուղարկել

Մաքրել ձևաթուղթը

Երբեք մի մուտքագրեք գաղտնաբառերը Google Ձևաթղթերում:

Այս բովանդակությունը չի ստեղծվել և չի հաստատվել Google-ի կողմից: Հաղորդել չարաշահման մասին - Օգտագործման պայմաններ - Գաղտնիության քաղաքականություն

Google Ձևաթղթեր